

ԷՕՁԵՄԱՐԻՆ ԷՍԲԻԻՎԱ

ՄԻԲԵԼ ԵՇԽԱՐԿԸ ՄԵԾ ԿՐԲՈՏՈՒԹԵԱՄԲ

Քարոզ



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Օ³βi áó ì³ Ñ̇ Ô³½³ ñ»³Ý

Սուրբ Եօզէմարիա Էսքրիվան ծնունել է Բարբասթրոյում (Հուէսքա, Իսպանիա), 1902թ. Յունուարի 9ին: 15ից 16 տարեկան հասակում սկսում է նշմարել աստուածային կոչման առաջին նախազգացումները եւ որոշում է քահանայ դառնալ: 1918ին, Լոզրոնիոյի ձեմարանում սկսում է եկեղեցական ուսումները, իսկ 1920ից դրանք շարունակում է Սարագոցցայի «Փառլայի Աբ. Ֆրանչիսկոս» ձեմարանում, ուր 1922ից սկսած վարում է "Մեծաւորի" պաշտօն: 1923ին, եկեղեցական Մեծաւորների արտօնութեամբ, սկսում է իրաւաբանական ուսումները Սարագոցցայի Համալսարանում, առանց աստուածաբանական ուսումները դրանց պատճառով տկարացնելու: Սարկաւագ է ձեռնադրուում 1924թ. Դեկտեմբերի 20ին, իսկ քահանայ՝ 1925թ. Մարտի 28ին:

Քահանայական ծառայութիւնը սկսում է Փերդիգուէրայի ժողովրդապետութիւնում – Սարագոցցայի թեմ – շարունակելով ապա ինքնին Սարագոցցայում: 1927թ. դարնանը, ինչպէս միշտ՝ Արքեպիսկոպոսի արտօնութեամբ, տեղափոխուում է Մադրիդ, ուր նուիրուում է քահանայական անխոնջ աշխատանքի, բոլոր միջավայրերում, ծառայելով նաեւ արուարձանների աղքատներին ու հիւանդներին, յատկապէս հիւանդանոցներում գտնուող անբուժելիներին ու մահամերձներին: Դառնում է Սուրբ Սրտի Առաքելական Տիկնանց կազմակերպութեան կողմից հիմնուած Հիւանդախնամ Ընկերութեան մատուանապետ, եւ դասաւանդում է մի համալսարանական Կաճառում: Միաժամանակ շարունակում է Իրաւաբանութեան մէջ վարդապետական աստիճան ստանալու համար հարկաւոր ուսումներն ու դասընթացքները, որոնք այդ ժամանակ կատարուում էին միայն Մադրիդի Համալսարանում:

1928թ. Հոկտեմբերի 2ին Տէրը նրան յստակ կերպով ցոյց է տալիս այն՝ ինչ մինչ այդ նա միայն կանխազգացել էր: Եւ Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվան հիմնում է «Օպուս Դէյ»ը: Ինչպէս միշտ՝ Տիրոջ կողմից մղուած, 1930թ. Փետրուարի 14ին Օպուս Դէյի առաքելական գործունէութիւնը սկսում է կանանց հետ: Այդպիսով, եկեղեցու գրկում բացուում էր մի նոր ճանապարհ, որի նպատակն է զարկ տալ, հասարակական բոլոր խաւերի անձանց մէջ, սրբութեան փնտռութիւն եւ առաքելական գործունէութեանը, շնորհիւ աշխատանքի սրբագործման, աշխարհի ներսում եւ առանց սեփական կեանքի վիճակը փոխելու:

Այդ 1928թ. Հոկտեմբերի 2ից սկսած, Օպուս Դէյի հիմնադիրը բոլոր հոգիների նկատմամբ առաքելական մեծ եռանդով նուիրուում է կատարելու առաքելութիւնը, որն Աստուած յանձնել էր իրեն: 1934ին նշանակուում է Աբ. Եղիսաբէթի անունը կրող Բարեգործական հաստատութեան Տեսուչ: Իսպանիայի քաղաքացիական պատերազմի տարիներին իր քահանայական պաշտօնը վարում է նախ Մադրիդում – յաճախ իր կեանքը ծանրօրէն վտանգի ենթարկելով – իսկ յետոյ՝ Բուրգոսում: Այդ ժամանակ արդէն երկարատեւ ուժգին հակառակութիւններ է կրում, որոնց համբերում է հանդարտ սրտով եւ գերբնական ոգիով:

1943թ. Փետրուարի 14ին հիմնում է Սուրբ Խաչի քահանայական Ընկերութիւնը, որն անբաժանելիօրէն միացած է Օպուս Դէյին եւ, Օպուս Դէյի աշխարհական անդամներին քահանայական ձեռնադրութիւն ստանալու եւ նրանց թեմական պատկանելութիւնը Գործի ծառայութեանն ի նպաստ կատարելու հնարաւորութիւն ընձեռելուց բացի, աւելի ուշ հնարաւորութիւն էր տալու թեմական քահանաներին նոյնպէս մասնակցելու Օպուս Դէյի հոգեկանութեանն ու հոգեւոր կեանքի գործնական հրահանգումների համակարգին, իրենց քահանայական կեանքի պարտաւորութիւնների կատարման մէջ փնտռելով սրբութիւնը, թեմական Առաջնորդի բացարձակ իրաւասութեան ներքոյ մնալով հանդերձ:

1946ին տեղափոխվում է Հոռոմ, ուր հաստատվում է մինչև իր կեանքի վերջը: Հոռոմից խթանում եւ դեկավարում է Օպուս Դէյի տարածումն ամբողջ աշխարհով մէկ, գործի դնելով իր բոլոր ուժերը՝ Գործին անդամակցած արանց եւ կանանց տալու համար ուսմունքային, հոգեւոր եւ առաքելական հաստատահիմն կրթութիւն: Հիմնադրի մահուան պահին, Օպուս Դէյը հաշուում էր 80 ազգութիւնների պատկանող աւելի քան 60.000 անդամներ:

Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվան եղել է Եկեղեցական Կանոնագրքի վաւերական Մեկնաբանութեան Քահանայապետական Յանձնաժողովի եւ Կղերանոցների ու Համալսարանների Սուրբ Ժողովի Խորհրդական, Սրբազան Քահանայապետի Պատուոյ Առաջնորդ եւ Հոռոմէական աստուածաբանական Քահանայապետական Կաճառի պատուաւոր անդամ, ինչպէս նաեւ՝ Նաւարայի (Իսպանիա) եւ Փիուրայի (Պեռու) Համալսարանների Աւագ Դիւանապետ:

Սբ. Եօզէմարիա Էսքրիվան մահացել է 1975թ. Յունիսի 26ին: Երկար տարիներ արդէն նուիրում էր իր կեանքը Եկեղեցու եւ Քահանայապետի համար: Թաղուած է Հոռոմում, Խաղաղութեան Տիրամայր եկեղեցու զետնափոր Դամբարանում: Օպուս Դէյի առաջնորդութեան գործում նրան յաջորդեց Հոգեշնորհ Ալվարոյ Դէլ Փորթիլլոն (1914-1994), որը, երկար տարիներ շարունակ Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի ամենասերտ գործակիցը լինելուց յետոյ, միաձայն ընտրուեց 1975թ. Սեպտեմբերի 15ին: Ներկայումս Օպուս Դէյի առաջնորդն է Հոգեշնորհ Խաւիէր Էչչեվարրիան: Նա նոյնպէս տասնեակ տարիներ աշխատել է Սբ. Եօզէմարիայի եւ նրա առաջին յաջորդի՝ Հոգեշնորհ Ալվարոյ Դէլ Փորթիլլոյի հետ: Օպուս Դէյը – որ սկզբից եւեթ ստացել էր թեմական Իշխանութիւնների արտօնութիւնը, իսկ 1943ին «*appositio manus*» արտօնագիրը, եւ ապա՝ Սուրբ Աթոռի կողմից վաւերացումը – Սրբազան Քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ-ի կողմից 1982թ. Նոյեմբերի 28ին հաստատուեց որպէս Անձնական Առաջնորդութիւն: Կանոնական այս կերպն ու սահմանումն էր նախատեսել եւ փափաքել Սուրբ Եօզէմարիան:

Սրբութեան համբաւը, որն իր կեանքի ընթացքում արդէն ունէր, իր մահից յետոյ տարածուեց երկրագնդի բոլոր անկիւններով մէկ, ինչպէս ցոյց են տալիս հոգեւոր եւ նիւթական շնորհների բազմաթիւ վկայութիւնները, որոնց ընդունումը վերագրուում է Օպուս Դէյի հիմնադրի միջնորդութեանը. դրանց շարքին զբանցուած են նաեւ բժշկումներ, որոնք գիտականօրէն անբացատրելի են: Բազմաքանակ են եղել նաեւ հինգ մայրցամաքներից ստացուած նամակները, որոնց շարքին նաեւ նամակները 69 ծիրանաւորների եւ մօտ 1.300 եպիսկոպոսների – որ կազմում է կաթողիկէ աշխարհի եպիսկոպոսների մէկ երրորդից աւելին – որոնցով Քահանայապետից խնդրում էին սկսել Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի Երանացման եւ Սրբադասման Դատավարական Ընթացքը: Սրբադասումների Դատավարական Ժողովը գործի բացման արտօնագիրը տուեց 1981թ. Յունուարի 30ին, իսկ Յովհաննէս Պօղոս Բ-ը այն վաւերացրեց 1981թ. Փետրուարի 5ին:

1981 եւ 1986թթ. միջեւ տեղի ունեցան ճանաչողական երկու դատավարութիւններ, Հոռոմում եւ Մադրիդում, քննելու համար Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի կեանքն ու առաքինութիւնները: Այս երկու դատավարութիւնների արդիւնքներին ծանօթանալով եւ ընդունելով խորհրդատու աստուածաբանների Համաժողովի եւ Սրբադասումների Դատավարական Ժողովի անդամ ծիրանաւորների ու եպիսկոպոսների Յանձնաժողովի նպատաւոր կարծիքները, 1990թ. Ապրիլի 9ին Սրբազան Քահանայապետը յայտարարեց Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի առաքինութիւնների հերոսականութեան մասին, որով նա ստացաւ Երանաշնորհի տիտղոս: 1991թ. Յուլիսի 6ին Սրբազան Քահանայապետը հրամայեց հրապարակել Վճռագիրը, ուր յայտարարում էր հրաշագործ բնոյթը մի բժշկումի, որը կատարուել էր Երանաշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի բարեխօսութեամբ. այդ Վճռագրով եզրափակուեցին կանոնական գործընթացները, որոնք անհրաժեշտ էին

Օպուս Դէյի հիմնադրի Երանացման համար, ինչը որ տեղի ունեցաւ 1992թ. Մայիսի 17ին, Սուրբ Պետրոսի հրապարակում կատարուած հանդիսաւոր ծիսակատարութեան ընթացքում, որին նախագահում էր Սրբազան Քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ.ը: 1992թ. Մայիսի 21ից Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի մարմինը հանգչում է Խաղաղութեան Տիրամայր առաջնորդական եկեղեցու խորանի ներքոյ, Օպուս Դէյի Առաջնորդութեան գլխաւոր կենտրոնում, տեւական կերպով ստանալով աղօթքի ու երախտագիտութեան ընկերակցութիւնը ամբողջ աշխարհով մէկ սփռուած բազմաթիւ անձանց, որոնք Աստծուն մօտեցել են Օպուս Դէյի հիմնադրի օրինակից եւ ուսուցումներից, ինչպէս նաեւ նրա բարեխօսութեանը դիմողների բարեպաշտութիւնից գրաւուած:

2001թ. Դեկտեմբերի 20ին, Յովհաննէս Պօղոս Բ. Սրբազան Քահանայապետը վաւերացրեց Սրբադասումների Դատավարական Ժողովի վճռագրերից մէկը, որը վերաբերում էր Երանելի Եօզէմարիայի բարեխօսութեամբ կատարուած հրաշքներից մէկին: 2002թ. Փետրուարի 26ին, եկեղեցական համագումարի հաւաքուած Ծիրանաւորների, Արքեպիսկոպոսների ու Եպիսկոպոսների կարծիքը ունկնդրելուց յետոյ, Սրբազան Քահանայապետը սրբադասեց Երանելի Եօզէմարիա Էսքրիվային. ծիսական արարողութիւնը տեղի ունեցաւ Հռոմում, Սուրբ Պետրոսի հրապարակում, 2002թ. Հոկտեմբերի 6ին:

Սուրբ Եօզէմարիա Էսքրիվայի գրչին են պատկանում, աստուածաբանական-կանոնական բնոյթ ունեցող «Հուլիգասի Աբբայուհին» մենագիր քննական ուսումնասիրութիւնից բացի, հոգեկանութեան մի շարք գրքեր, որոնք թարգմանուել են բազմաթիւ լեզուների. «Ճանապարհ», «Սուրբ Վարդարանը», «Յիսուսն է անցնում», «Աստուծոյ ընկերներ», «Խաչի ճանապարհ», «Եկեղեցին, մեր Մայրը», «Ակօս», «Հնոց», որոնցից վերջին հինգը հրատարակուել են յետ մահու: Միջազգային լրատուամիջոցներին տրուած հարցազրոյցների շարքը ծնունդ է տուել «Զրոյցներ Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի հետ» հատորին:

ՄԻՐԵՂ ԱՇԽԱՐՀՈՐ ԱԵՕ ԿՐԹՈՏՈՒԹԵԱՐ¹

Քիչ առաջ ունկնդրեցիք Աստուածաշնչի երկու հատուածների հանդիսաւոր ընթերցումը, որոնք համապատասխանում են Հոգեգալստից յետոյ ԻԱ. կիրակի օրուայ Սուրբ Պատարագի արարողակարգին: Աստուծոյ խօսքն ունկնդրած լինելու փաստն ինքնին արդէն իսկ դնում է ձեզ այն ծիրից ներս, ուր կամենում են գետեղուել նաեւ խօսքերը, որոնք այժմ ուղղում եմ ձեզ. քահանայի խօսքեր, արտասանուած՝ Աստուծոյ որդիների մի մեծ ընտանիքի դիմաց, Իր Սուրբ Եկեղեցում: Խօսքեր, ուստի, որոնք կամենում են գերբնական լինել, եւ հռչակել Աստուծոյ մեծութիւնը եւ Նրա ողորմածութիւնը մարդկանց նկատմամբ. խօսքեր, որոնք ձեզ կը նախապատրաստեն այս տպաւորիչ Սուրբ Պատարագին, որն այսօր ծիսակատարում ենք Նաւարրայի Համալսարանի ճամբարում: Մի պահ ուշադրութեամբ քննէք պարագան, որին ակնարկում էի: Ծիսակատարում ենք Սուրբ Պատարագը, Տիրոջ Մարմնի եւ Արեան խորհրդական զոհաբերումը, հաւատքի խորհուրդը, որն իր մէջ ամփոփում է քրիստոնէութեան բոլոր խորհուրդները: Ծիսակատարում ենք, ուստի, ամենասրբազան ու վերանցական արարողութիւնը, որը մենք՝ մարդիկ կարող ենք, Աստուծոյ շնորհով, կատարել այս կեանքում. հաղորդութեան մէջ Տիրոջ Մարմնին եւ Արեանը միանալը մեր համար դառնում է, որոշակի առումով, կարծես արձակում երկրի ու ժամանակի կապանքներից, արդէն իսկ Աստուծոյ հետ Երկնքում գտնուելու համար, այնտեղ՝ ուր Քրիստոսն ինքը չորացնելու է մեր աչքերի արցունքները եւ ուր չի լինելու այլեւս ո՛չ մահ, ո՛չ լաց, ո՛չ յոգնութեան հեծեծանքներ, քանի որ հին աշխարհն այլեւս անցած է լինելու²:

Այսքան մխիթարական եւ խորիմաստ այս ճշմարտութիւնը, Ամենասուրբ Հաղորդութեան վախճանաբանական այս նշանակութիւնը, ինչպէս սովոր են ասելու աստուածաբանները, կարող է սակայն սխալ հասկացուել. եւ սխալ է հասկացուել այն իւրաքանչիւր անգամ, երբ կամեցել են քրիստոնէական կեանքը ներկայացնել որպէս ինչ որ մի բան, որը բացառապէս «Հոգեւոր» է – ի նկատի ունեմ «Հոգեպաշտական» իմաստով – , վերապահուած՝ «ամբիծ», բացառիկ մարդկանց, որը չի խառնուում այս աշխարհի անարգ ու արհամարհելի իրականութիւններին, կամ առաւելագոյնս՝ ակամայ հանդուրժում եւ կրում է դրանք որպէս մի բան, որին Հոգին անհրաժեշտօրէն յարադրուած է, քանի դեռ ապրում ենք երկրի վրայ:

Երբ մարդ կեանքին դիտում է այս տեսանկիւնից, տաճարը դառնում է քրիստոնէական կեանքի գերագոյն վայրը: Այդպիսի դէպքում, քրիստոնեայ լինել նշանակում է այցելել տաճար, մասնակցել սրբազան արարողութիւններին, կառչել մի եկեղեցական հասարակագիտութեան, մի տեսակ առանձնացեալ «աշխարհում», որն ինքն իրեն ներկայացնում է որպէս Երկնքի նախասրահ, մինչ սովորական աշխարհն ընթանում է իր ճանապարհով: Քրիստոնէութեան ուսմունքը, շնորհի կեանքը, այսպիսի աշխարհայեացքով մարդկանց համար անցնում են, հետեւաբար, հազիւ հպուելով մարդկային պատմութեան խռովայոյզ ընթացքին, առանց նրա հետ յարաբերութեան մէջ մտնելու:

Հոկտեմբերի այս առաւօտեան, այն պահին՝ երբ տրամադրւում ենք ընկղմուելու Տիրոջ Զատիկի յիշատակի կատարման մէջ, մի պարզ «ոչ»ով ենք պատասխանում քրիստոնէութեան վերաբերեալ այդ խեղաթիւրուած տեսութեանը: Մի պահ մտածեցէք մեր Սուրբ Պատարագի, մեր Գոհաբանութեան շրջանակին. գտնուում ենք մի եզակի տաճարում. կարելի է ասել, որ աղօթասրահը համալսարանական ճամբարն է, խորանի սրբապատկերը

¹ Սուրբ Եօզէմարիա Էսքրիվան այս քարոզն արտասանել է 1967թ. Հոկտեմբերի 8ին, Նաւարրայի Համալսարանի Փամփրոնայում գտնուող ճամբարում:

² Հմմտ. Յյտ 21, 4

Համալսարանի գրադարանն է, մեր չորսբոլորը վերամբարձ կռուսկներ կան նոր շինութիւնների կառուցման համար, իսկ մեր վերեւում Նաւարրայի երկինքն է ... :

Մի՞թէ ճշմարիտ է, որ մեզ շրջապատող իրողութիւններին ուղղուած այս հայեացքը ձեզ համար հաստատում է – կենդանի ու անմոռանալի պատկերով – որ ամէնօրեայ սովորական կեանքն է ձեր քրիստոնէական գոյութեան ճշմարիտ «վայրը»: Որդեակներս, այնտեղ՝ ուր որ են մարդիկ՝ ձեր եղբայրները, այնտեղ՝ ուր որ են ձեր իղձերը, ձեր աշխատանքը, այնտեղ՝ ուր հեղուկ է ձեր սէրը, դա է Քրիստոսի հետ ձեր ամէնօրեայ հանդիպման վայրը: Երկրի ամենանիւթական իրողութիւնների մէջ է, որ պէտք է սրբանանք, ծառայելով Աստծուն եւ բոլոր մարդկանց:

Անդադար ուսուցանել եմ, Աստուածաշնչի խօսքերով, որ աշխարհը չար է. քանի որ Աստծոյ ձեռքերի գործն է, քանի որ Նրա արարածն է, քանի որ Եստուէն Հայեց նրան եւ տեսաւ՝ որ բարի էր¹: Մենք՝ մարդիկս ենք, որ այն դարձնում ենք չար ու տգեղ, մեր մեղքերով ու մեր անհաւատարմութիւններով: Վստահ եղէք, դաւակներս. ամէնօրեայ կեանքի պարկեշտ իրականութիւններից որեւէ տեսակի փախուստ, ձեր՝ աշխարհի արանց եւ կանանց համար նշանակում է հակառակն Աստծոյ կամքի:

Մինչդեռ այժմ պէտք է հասկանաք – մի ամբողջովին նոր լոյսի ներքոյ – որ Աստուած ձեզ կանչում է ծառայելու Իրեն մարդկային կեանքի քաղաքացիական, նիւթական, երկրային պաշտօնների ու պարտականութիւնների «մէջ» եւ դրանց «միջոցով»: գիտական աշխատանոցներում, հիւանդանոցների վիրահատական սենեակներում, գորանոցներում, համալսարանների ամբիոններից, գործարաններում, արհեստանոցներում, դաշտերում, ընտանեկան օջախներում եւ աշխատանքի անծայրածիր համայնապատկերում Աստուած մեզ սպասում է ամէն օր: Քաջ իմացէք. սուրբ, աստուածային «ինչ որ մի բան» կայ՝ ամենասովորական իրավիճակներում թաքնուած, ինչ որ մի բան՝ որի բացայայտումը ձեզնից իւրաքանչիւրի պարտականութիւնն է:

Այն ուսանողներին ու աշխատաւորներին, որոնք Երեսունական թուականներին հետեւում էին իմ ուսուցումներին, յաճախ էի ասում, որ պէտք է ընդունակ լինէին «նիւթականացնելու» հոգեւոր կեանքը: Այդպիսով կամենում էի հեռացնել նրանց փորձութիւնից – որն այն ժամանակ այնքա՛ն յաճախակի էր, եւ նաեւ այսօր – վարելու մի տեսակ երկակի կեանք. մի կողմից, ներանձնական կեանքը, Աստծոյ հետ յարաբերութեան կեանքը. միւս կողմից, որպէս առաջինից տարբեր եւ առանձնացուած բան, ընտանեկան, մասնագիտական եւ հասարակական կեանքը, ամբողջովին երկրային փոքրիկ իրականութիւններից բաղկացած:

Ո՛չ, դաւակներս: Ձի կարող մի երկակի կեանք լինել, չենք կարող մտահերձներ լինել, եթէ կամենում ենք քրիստոնէաներ լինել. միայն մի կեանք կայ, բաղկացած մարմնից եւ հոգուց, եւ սա է, որ պէտք է – հոգու եւ մարմնի մէջ – սուրբ եւ Աստծով լի լինի. այս անտեսանելի Աստուածը, որին գտնում ենք ամենատեսանելի ու ամենանիւթական իրողութիւններում:

Ա՛յլ ճանապարհ չկայ, դաւակներս. կամ ընդունակ կը լինենք գտնելու Տիրոջը մեր ամէնօրեայ սովորական կեանքում, կամ էլ Նրան երբեք չենք գտնի: Այս իսկ պատճառով, կարող եմ ձեզ ասել, որ մեր դարաշրջանը կարիքն ունի նիւթին եւ ամենասովորական թուացող իրավիճակներին վերադարձնելու նրանց նախնական ազնուական իմաստը, ի ծառայութիւն դնելու դրանք Աստծոյ Արքայութեանը, հոգեկանացնելու դրանք, դարձնելով դրանք Յիսուս Քրիստոսի հետ մեր շարունակական հանդիպման միջոց եւ առիթ:

Քրիստոնէական իրական մտածողութիւնը – որը դաւանում է մարմնի յարուցիւնը – միշտ ընդդիմացել է, ինչպէս եւ տրամաբանական է, «սպամարմնացմանը», առանց երկնչելու՝ թէ կը վատահամբաւուի իբրեւ մատերիալիստ: Թոյլատրելի է, ուստի, խօսել մի «քրիստոնէական մատերիալիզմ»ի մասին, որն համարձակօրէն ընդդիմանում է հոգին ժխտող մատերիալիզմներին:

¹ Հմմտ. Ծնդ 1, 7...

Ի՞նչ են Խորհուրդները – հետքերը Խօսքի Մարդեղութեան, ինչպէս ասել են Հայրերը – եթէ ոչ՝ ամենաակնբախ բացայայտումը այս ճանապարհի, որն Աստուած ընտրել է մեզ սրբացնելու եւ դէպի Երկինք առաջնորդելու համար: Չէ՞ք տեսնում, որ Խորհուրդներից իւրաքանչիւրն Աստուծոյ սէրն է, իր արարիչ եւ փրկիչ ամբողջ գորութեամբ, որ պարգեւում է մեզ գործածելով նիւթական միջոցներ: Ի՞նչ է Գոհաբանական այս Պատարագը – որը քիչ անց ծիսակատարելու ենք – եթէ ոչ՝ մեր Փրկչի պաշտելի Մարմինն ու Արիւնը, որն ընծայում է մեզ ընդմէջ այս աշխարհի խոնարհ նիւթի – գինի եւ հաց – , ընդմէջ «մարդու կողմից մշակուած բնական տարրեր»ի, ինչպէս վերջին Համամիութենական Ժողովը կամեցաւ յիշեցնել¹:

Լաւագոյնս հասկանալի է, զաւակներս, թէ ինչու Առաքեալը կարող էր գրել. «Ամէն ինչ ձերն է, դուք՝ Քրիստոսինը, իսկ Քրիստոս՝ Աստուծունը»²: Խօսքը վերաբերում է մի վերամբարձ շարժման, որը Սուրբ Հոգին, որն հեղուկ է մեր սրտերից ներս, կամենում է առաջացնել աշխարհում. երկրից, մինչեւ Տիրոջ փառքը: Եւ որպէսզի կասկած չլինէր, որ այս շարժման մէջ ներառնուած է նաեւ այն՝ ինչը որ առաւել հասարակ է թւում, Պօղոս Առաքեալը գրում է նաեւ. «Եթէ ուտում էք, եթէ խմում էք, ամէն բան Աստուծոյ փառքի համար արէք»³:

Աստուածաշնչի այս ուսմունքը, որ գտնւում է, ինչպէս գիտէք, Օպուս Դէյի հոգու սրտում իսկ, պէտք է մղի ձեզ իրագործելու ձեր աշխատանքը կատարելութեամբ, Աստուծոն եւ մարդկանց սիրելու՝ սիրով կատարելով ձեր սովորական օրուայ փոքրիկ գործերը, բացայայտելով այն «աստուածային ինչ որ մի բան»ը, որը թաքնուած է մանր մասնիկներում: Այս առումով իրօք տեղին է Քասթիլիայի բանաստեղծի ոտանաւորը. «Կամաց կամաց, գեղեցիկ ձեռագրով. / գործերը լաւ անելը / աւելին արժէ՝ քան դրանք անելը»⁴:

Վստահեցնում եմ ձեզ, զաւակներս, որ երբ քրիստոնեան սիրով կատարում է ամէնօրեայ նուազ վերանցական գործերը, նրանցում առատագեղ ներկայ է Աստուծոյ վերանցականութիւնը: Այս պատճառով է, որ ձեզ կրկնում եմ, պինդ յամառութեամբ, որ քրիստոնէական կոչումը կայանում է ամէնօրեայ արձակ բանաստեղծութիւնը մետասանավանկ տաղի վերածելու մէջ: Երկինքն ու երկիրը, զաւակներս, թւում է՝ թէ միանում են այնտեղ ներքեւում, հորիզոնի գծի վրայ: Եւ սակայն ո՛չ, այլ ձեր սրտերում է, որ իսկապէս միաձուլւում են, երբ սրբութեամբ ապրում էք ամէնօրեայ կեանքը: ...

Ասացի ձեզ. սրբութեամբ ապրել ամէնօրեայ կեանքը: Եւ այս խօսքերով ի նկատի ունեմ ձեր քրիստոնէական վարքի ու գործելակերպի ամբողջ համակարգը: Մի կողմ դրէք, հետեւաբար, երազանքները, կեղծ գաղափարապաշտութիւնները, երեւակայութիւնների գրկում օրօրուելը, բոլոր այն դիրքորոշումները, որոնք սովոր եմ կոչելու «”երանի՛ թէ”ի հոգեկանութիւն». – երանի՛ թէ ամուսնացած չլինէի, երանի՛ թէ այս մասնագիտութիւնը չունենայի, երանի՛ թէ աւելի առողջ լինէի, երանի՛ թէ երիտասարդ լինէի, երանի՛ թէ տարեց լինէի ... – . այլ աւելի ճիշտ կը լինի, որ հետեւէք, չափաւոր ժուժկալութեամբ, ամենանիւթական ու ամենաանմիջական իրականութեանը, որովհետեւ ճիշտ այնտեղ է, որ գտնւում է Տէրը. «Նայէք ձեռքերս ու ոտքերս», ասում է յարուցեալն Յիսուս, «ես ինքս եմ: Հպուէք ինձ եւ տեսէք. ուրուականները մարմին եւ ոսկոր չունեն, ինչպէս տեսնում էք՝ որ ես ունեմ»⁵:

Բազմաթիւ են աշխարհական միջավայրի տեսակէտները, որոնցում գործում էք, որ լուսաւորւում են այս ճշմարտութիւններից մեկներով: Մտածէք, օրինակի համար, քաղաքացիական կեանքում ձեր գործունէութեանը որպէս քաղաքացիներ: Մի մարդ, որը գիտակից է, որ աշխարհը – եւ ո՛չ միայն տաճարը – Քրիստոսի հետ իր հանդիման վայրն

¹ Հմմտ. *Gaudium et spes*, 38.

² 1Կր 3, 22-23

³ 1Կր 10, 31

⁴ «Despacito, y buena letra: / El hacer las cosas bien / Importa más que el hacerlas». A. Machado, *Poesías completas*, 161 (*Proverbios y cantares*, XXIV), Espasa-Calpe, Madrid 1940.

⁵ Ղկս 24, 39

է, սիրում է այս աշխարհը, ճիգ է գործադրում հասնելու իմացական եւ մասնագիտական մի լաւ պատրաստուածութեան, եւ աստիճանաբար կազմաւորում է – լիակատար ազատութեամբ – իր սեփական դատանիչները միջավայրի խնդիրների վերաբերեալ, ուր գործում է. ապա կայացնում է իր որոշումները, որոնք, քրիստոնեայի որոշումներ լինելով, արդիւնքն են նաեւ անձնական խորհրդածութեան, որը խոնարհաբար ձգտում է բացայայտելու Աստուծոյ Կամքը կեանքի այս փոքր ու մեծ մանրամասներում:

Բայց այս քրիստոնեայի մտքով երբեք չի անցնում կարծել կամ ասել, որ ինքը տաճարից աշխարհ է իջնում որպէս Եկեղեցու ներկայացուցիչ եւ երեսփոխան, եւ որ իր կատարած ընտրութիւնները այդ խնդիրների «կաթողիկէ լուծումներն» են: Այսպէս չի կարող լինել, զաւակներս: Նմանատիպ դիրքորոշումները կղերականութիւն են, «պաշտօնական կաթողիկէութիւն», կամ ինչպէս կամենում էք կոչել այն: Բոլոր դէպքերում էլ նշանակում է բռնադատել իրողութիւնների էութիւնը: Պէտք է ամէնուր տարածէք ճշմարիտ եւ իրական «աշխարհական մտածելակերպ», որը պէտք է առաջնորդի երեք եզրակացութիւնների.

– բաւականաչափ ուղղամիտ լինելու, անձամբ յանձն առնելով սեփական պատասխանատուութիւնների կշիռը.

– բաւականաչափ քրիստոնեայ լինելու, յարգելով հաւատակից եղբայրներին, որոնք առաջարկում են – ենթադատելի հարցերում – լուծումներ, որոնք տարբեր են նրանցից, որոնք մեզնից իւրաքանչիւրը պաշտպանում է.

– բաւականաչափ կաթողիկէ լինելու, մեր շահերին ի նպաստ չգործածելով Եկեղեցին, որ մեր Մայրն է, նրան մարդկային կողմնակալութիւնների մէջ խառնելով:

Ակնյայտ է, որ այս հարթութեան վրայ, ինչպէս եւ միւս բոլոր հարթութիւններում, դուք չէիք կարողանայ իրականացնել ամէնօրեայ կեանքը սրբութեամբ ապրելու այս ծրագիրը, եթէ չվայելէիք այն ամբողջ ազատութիւնը, որը ձեզ ճանաչում է լինի՛ Եկեղեցու, լինի՛ Աստուծոյ պատկերով ստեղծուած արանց եւ կանանց ձեր արժանապատուութեան կողմից: Անձնական ազատութիւնը էական է քրիստոնէական կեանքում: Բայց մի՛ մոռացէք, զաւակներս, որ ես միշտ խօսում եմ պատասխանատուութեան զգացումն ունեցող ազատութեան մասին:

Մեկնաբանեցէք, հետեւաբար, խօսքերս այն իմաստով, որով դրանք ասուած են. կոչ կիրարկելու – ամէն օր, եւ ո՛չ թէ միայն ստիպողական իրավիճակներում – ձեր իրաւունքները. եւ օրինակելիօրէն կատարելու քաղաքացիական ձեր պարտականութիւնները – քաղաքական կեանքում, տնտեսական կեանքում, համալսարանական կեանքում, մասնագիտական կեանքում – քաջաբար յանձն առնելով ձեր ազատ որոշումների բոլոր հետեւանքները, ստանձնելով ձեզ պատկանող անձնական անկախութեան պատասխանատուութիւնը: Եւ այս քրիստոնէական «աշխարհական մտածելակերպը» ձեր համար հնարաւոր կը դարձնի խուսափելու որեւէ տեսակի անհանդուրժողականութիւնից եւ որեւէ տեսակի մոլեռանդութիւնից, այսինքն – դրական կերպով ասելու համար – ձեզ թոյլ կը տայ խաղաղութեամբ համատեղ ապրելու ձեր բոլոր համաքաղաքացիների հետ եւ նաեւ նպաստելու հասարակական կեանքի տարբեր դասակարգերի միջեւ խաղաղ համակեցութեանը:

Գիտեմ, որ կարիք չկայ ձեզ յիշեցնելու այն՝ ինչ կրկնում եմ տարիներ շարունակ: Քաղաքացիական ազատութեան, համակեցութեան եւ ըմբռնումի այս ուսմունքը ամենաառաջնակարգ տարրերից է այն պատգամի, որն Օպուս Դէյը տարածում է: Արդեօք կարիք կա՞յ, որ եւս մէկ անգամ հաստատեմ ու պնդեմ, որ այն տղամարդիկ ու կանայք, որոնք կամենում են Քրիստոս Յիսուսին ծառայել Աստուծոյ Գործի մէջ, պարզապէս ծիւղերին հաւասար քաղաքացիներ են, որոնք լուրջ պատասխանատուութեամբ ջանում են ապրել – մինչեւ վերջին եզրահանգումները – իրենց քրիստոնէական կոչումը:

Ոչինչ չկայ, որն իմ զաւակներին տարբերի քաղաքացիական հասարակութեան միւս անդամներից: Նրանք ընդհանուր ոչինչ չունեն, մինչդեռ, կրօնաւորական միաբանութիւնների անդամների հետ, բացառութեամբ՝ հաւատքի: Ես սիրում եմ կրօնաւորներին եւ մեծարում ու հիանում եմ նրանց փակարաններով, նրանց առաքելական գործունէութիւններով, աշխարհից նրանց անջատումով – «աշխարհի անպնտու՞մ»ը – որոնք Եկեղեցու գրկում սրբութեան «ա՛յլ» նշաններ են: Բայց Տէրն ինձ

կրօնաւորական կոչում չի տուել, եւ այն փափաքելն ինձ համար անկարգութիւն կը լինէր: Երկրի վրայ ոչ մի հեղինակութիւն չի կարող պարտաւորեցնել ինձ կրօնաւոր լինելու, ինչպէս ոչ մի հեղինակութիւն չի կարող ստիպել ինձ ամուսնանալու: Ես թեմական քահանայ եմ. Քրիստոս Յիսուսի քահանաներից մէկն եմ, որը մեծ կրքոտութեամբ սիրում է աշխարհը: Նրանք՝ ովքեր – իմ խեղճ մեղաւորիս հետ – հետեւեցին Յիսուս Քրիստոսին, հետեւեալներն են. սակաւաթիւ քահանաներ, որոնք նախապէս զբաղուել են աշխարհական մի մասնագիտութեամբ կամ արհեստով. առաւել բազմաթիւ թեմական քահանաներ աշխարհի տարբեր թեմերից – որոնք այդպիսով ամրապնդում են իրենց հնազանդութիւնն ու սէրը իրենց Եպիսկոպոսների նկատմամբ, ինչպէս նաեւ՝ իրենց թեմական աշխատանքի արդիւնաւէտութիւնը – , մշտապէս խաչի վրայ տարածուած բազուկներով, որպէսզի բոլոր հոգիները տեղ գտնեն իրենց սրտում, եւ որոնք, իմ նման, փողոցներում են, աշխարհում, եւ այն սիրում են. եւ մեծ բազմութիւնը արանց եւ կանանց – տարբեր ազգութիւնների, տարբեր լեզուների, տարբեր ցեղերի – որոնք ապրում են իրենց մասնագիտական աշխատանքով, մեծաւ մասամբ՝ ամուսնացած, բաւականին թուով ուրիշներ՝ կուսակրօն, որոնք բոլորն էլ իրենց համաքաղաքացիների հետ մասնակցում են երկրային հասարակութիւնն առաւել մարդկային եւ առաւել արդար դարձնելու ծանր յանձնարարութեանը. ամէնօրեայ պարտականութիւնների ազնուական պայքարում, անձնական պատասխանատուութեամբ – կրկնում եմ – , միւս մարդկանց հետ, ձեռք ձեռքի, ճաշակելով յաջողութիւններն ու անյաջողութիւնները, ճիգ գործադրելով՝ կատարելու իրենց պարտականութիւնները եւ կիրարկելու իրենց հասարակական եւ քաղաքացիական իրաւունքները: Եւ այս ամէնը բնականութեամբ, ինչպէս որեւէ գիտակից քրիստոնեայ, առանց ընտրեալ անձինք լինելու մտածելակերպի, իրենց աշխատակիցների զանգուածի մէջ ձուլուած, մինչ գործի են լծուած՝ բացայայտելու աստուածային փառքի շողարձակումները, որոնք ցոլանում են ամենասովորական ու ամենաանշան իրականութիւններում:

Այն գործերը նոյնպէս, որոնց Օպուս Դէյը նպաստում է որպէս հիմնարկ, գերազանցաբար աշխարհական նկարագիր ունեն. դրանք եկեղեցական գործեր չեն: Զգեստաւորուած չեն Եկեղեցու սրբազան Նուիրապետութեան ոչ մի պաշտօնական ներկայացուցչութեամբ: Դրանք մարդկային, մշակութային, հասարակական զարգացումի գործեր են, իրականացուած՝ քաղաքացիների կողմից, որոնք գործի են լծուած՝ լուսաւորելու համար դրանք Աւետարանի լոյսով եւ ջերմացնելու համար Քրիստոսի սիրով: Մի տուեալ կարող է օգնել ձեզ հասկանալու խօսքերիս իմաստը. Օպուս Դէյը որպէս առաքելութիւն չունի եւ երբեք էլ չի ունենալու, օրինակի համար, թեմական դպրանոցների տնօրինումը, ուր Եպիսկոպոսները, «Սուրբ Հոգու կողմից հաստատուած»¹, պատրաստում են ապագայ քահանաներին:

Օպուս Դէյը, մինչդեռ, զարկ է տալիս բանուորների համար որակաւորման, գիւղաբնակների համար մասնագիտական կազմաւորման, տարրական, միջին եւ համալսարանական կրթութեան կենտրոններին, եւ ուրիշ բազմաթիւ եւ միմեանցից տարբեր գործունէութիւնների, ամբողջ աշխարհով մէկ, որովհետեւ իր առաքելական եռանդը – ինչպէս առիթն ունեցայ գրելու արդէն շա՛տ տարիներ առաջ – անափ ծով է: Բայց ինչո՞ւ խօսքս երկարացնեմ այս հարցի շուրջ, երբ ձեր իսկ ներկայութիւնն այստեղ աւելի պերճախօս է՝ քան երկար ճառասացութիւնը: Դուք՝ Նաւարրայի Համալսարանի Ընկերներդ, մասն էք մի ժողովրդի, որը գիտակից է, որ մասնակցում է զարգացումին այն հասարակութեան, որին պատկանում է: Ձեր սրտանց քաջալերանքը, ձեր աղօթքը, ձեր գոհողութիւններն ու ձեր նպաստները չեն հոսում կաթողիկէ դաւանապաշտութեան ջրանցքներով. ձեր գործակցութիւնն ընծայելով, դուք յստակ վկայութիւն էք տալիս քաղաքացիական արդար եւ խղճամիտ գիտակցութեանը, որն հոգատար է երկրային համընդհանուր բարիքի նկատմամբ. եւ փաստում էք, որ համալսարանը կարող է ծնուել ժողովրդի կորովից եւ պահուել ժողովրդի կողմից:

Եւս մէկ անգամ, այս առիթով, փափաքում եմ երախտագիտութիւնս յայտնել այն համագործակցութեան համար, որ մեր Համալսարանին ընծայում են իմ ազնուագարմ

¹ Գրծ 20, 28

Փամփլոնա քաղաքը, Նաւարրայի մեծ ու հզօր նահանգը, Իսպանիայի բոլոր կողմերում բնակուող բարեկամները, եւ ի վերջոյ – սա ասում եմ իւրայատուկ յուզմունքով – ոչ-իսպանացիները եւ մինչեւ իսկ ոչ-կաթողիկէներն ու ոչ-քրիստոնեաները, որոնք հասկացել են այս նախաձեռնութեան նպատակը, դիտաւորութիւնն ու հոգին, եւ դա փաստել են գործով:

Բոլորն էլ նպաստել են գործին, որպէսզի Համալսարանը միշտ առաւել լուսառատ փարոս լինի քաղաքացիական ազատութեան, մտաւորական պատրաստութեան, մասնագիտական մրցակցութեան, եւ խթանիչ գործօն համալսարանական կրթութեան ամբողջ համակարգի համար: Ձեր վեհանձն զոհողութիւնը նեցուկ է այս ընդհանրական գործին, որն ամբողջովին նպատակամղուած է մարդկային գիտութիւնների զարգացմանը, հասարակական առաջադիմութեանը, հաւատքի մանկավարժութեանը:

Այն՝ ինչ հիմա ասացի ձեզ, շատ լաւ է հասկացել Նաւարրայի ժողովուրդը, որն իր համալսարանի մէջ տեսնում է նաեւ նահանգային տնտեսական եւ յատկապէս՝ հասարակական զարգացման այն գործօնը, որն իր զաւակներից շատերի համար հնարաւոր դարձրեց ստանալ մտաւորական մասնագիտացում, որն այլապէս շատ դժուարին էր, եթէ ոչ՝ ուղղակի անհնարին: Նահանգի կեանքում Համալսարանի ունեցած դերը հասկանալն էր անշուշտ, որ Նաւարրայի քաղաքական իշխանութիւններին մղեց նեցուկ կանգնելու նրան ամենասկզբնական ժամանակներից ելեթ. օգնութիւն, որն անկասկած սահմանուած է ամէն օր աւելի ընդարձակ եւ ոգեւորուած դառնալու: Ես շարունակում եմ փայփայել յոյսը, որ հասնելու է պահը – քանի որ համապատասխանում է արդարութեան չափանիշներին եւ բազմաթիւ պետութիւններում գործող կանոնակարգին – երբ իսպանական Պետութիւնը նպաստելու է, իրեն պատկանող հարցերում, թեթեւացնելու բեռն այս գործունէութեան, որը չի հետապնդում որեւէ տեսակի սեփական շահ, այլ ընդհակառակն՝ ամբողջովին նուիրուած է հասարակութեան ծառայութեանը եւ ժողովրդի ներկայ ու ապագայ բարօրութեան համար արդիւնաւէտ կերպով աշխատելուն:

Իսկ այժմ, դուտորեր իմ եւ որդիներ, թոյլ տուէք ինձ կանգ առնել ամէնօրեայ կեանքի մէկ ա՛յլ – իւրայատուկ կերպով յուզիչ – հարցի վրայ: Խօսքս վերաբերում է մարդկային սիրոյն, իրական եւ ամբիծ սիրոյն տղամարդու եւ կնոջ միջեւ, նշանադրութեանը, ամուսնութեանը: Ուժգին կարիքն եմ զգում եւս մէկ անգամ ասելու, որ այս մարդկային սուրբ սէրը ինչ որ մի պարզապէս թոյլատրուած կամ հանդուրժուած բան չէ, հոգու իրական գործունէութիւնների կողքին, ինչպէս կարող է լուեայն հասկացուել այն կեղծ հոգեպաշտութիւններում, որոնց ակնարկում էի սկզբում: Քառասուն տարի է, որ բարձր ձայնով եւ գրաւոր քարոզում եմ ամբողջովին հակառակը, եւ ի վերջոյ սկսում են հասկանալ դա նրանք՝ ովքեր չէին հասկանում:

Սէրը, որն առաջնորդում եւ տանում է դէպի ամուսնութիւն եւ ընտանիք, կարող է ինքը նոյնպէս աստուածային, կոչումնային, զարմանահրաշ ուղի լինել, ճանապարհ՝ ամբողջովին նուիրուելու մեր Աստծուն: Գործերը կատարելութեամբ արէք, յիշեցնում էի ձեզ, սէր ներդրէք օրուայ փոքրիկ գործերում, բացայայտէք – նորից եմ պնդում – այն «աստուածային ինչ որ մի բան»ը, որ թաքնուած է մանրամասներում. ամբողջ այս ուսմունքը յատուկ կիրառութիւն է գտնում կենսական տարածքում, ուր շարժում է մարդկային սէրը:

Դասախօսներ, ուսանողներ եւ դուք բոլորդ, որ ձեր աշխատանքն էք ընծայում Նաւարրայի Համալսարանին: Դուք շատ լաւ գիտէք, որ ես ձեր գորովի ամենաթանկարժէք զգացումները յանձնել ու վստահել եմ Սրբուհի Մարիամին, Գեղեցիկ Սիրոյ Մօրը: Որմնախորշը, որի ներսում է նրա արձանը, այստեղ է. բարեպաշտութեամբ կառուցեցինք այն, համալսարանական ճամբարում, որպէսզի ընդունի ձեր աղօթքները եւ ընծան այս հոյակապ ու մաքուր սիրոյ, որն ինքը օրհնում է:

«Չգիտէ՞ք, որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգուն, որ ստացել էք Աստծուց, եւ որ, հետեւաբար, ինքներդ ձեզ չէք պատկանում»¹: Քանի՛ անգամ Սրբուհի Կոյսի՛ Գեղեցիկ Սիրոյ Մօր արձանի առաջ դուք բերկրանքով լի հաստատումով պատասխանել եւ

¹ 1Կր 6, 19

պատասխանելու էք Առաքեալի այս հարցին: Այո՛, – ասելու էք – , մենք դա գիտենք, Կոյս Աստուածամայր, եւ քո արդիւնաւէտ օգնութեամբ կամենում ենք նաեւ կեանքով ապրել այն:

Հայեցողական աղօթքը ձեր սրտից կը բխի այն ամէն անգամ, որ կը խորհրդածէք այս վսեմ ճշմարտութեան շուրջ. մի այսքա՛ն նիւթական բան, ինչպիսին է իմ մարմինը, Սուրբ Հոգին այն նախընտրել է՝ նրանում հաստատելու համար իր բնակութիւնը ... , ես այլեւս չեմ պատկանում ինքս ինձ ... , իմ մարմինն ու իմ հոգին – իմ էութիւնն ամբողջովին – Աստուծոն են ... : Եւ այս աղօթքը արգասաւոր կը լինի գործնական արդիւնքներով, որոնք յառաջ կը գան այն մեծ եզրակացութիւնից, որն Առաքեալն ինքը յուշում է. «Փառաւորեցէք Աստուծոն ձեր մարմիններում»¹:

Միւս կողմից, չէք կարող անգիտանալ, որ միմիայն նրանցից՝ ովքեր ամբողջ խորութեամբ ըմբռնում եւ արժեւորում են մտքերը, որոնք արտայայտեցինք մարդկային սիրոյ վերաբերեալ, կարող է յառաջ գալ այն անձառելի ըմբռնումը, որի մասին խօսում է Յիսուս², այն՝ որն ազնուափայլ կերպով աստուածային պարգեւ է եւ մղում է մարմինն ու հոգին ամբողջովին ընծայելու Տիրոջը, Նրան նուիրաբերելով իր անբաժան սիրտը, առանց երկրային սիրոյ միջնորդութեան:

Պէտք է այլեւս աւարտեմ, գաւակներս: Սկզբում ձեզ ասում էի, որ խօսքերս կամենում էին ինչ որ մի բան աւետել ձեզ Աստուծոյ մեծութիւնից եւ ողորմածութիւնից: Կարծում եմ, որ դա արեցի՝ ասելով ձեզ սրբութեամբ ապրել ամէնօրեայ սովորական կեանքը. որովհետեւ երկրային իրականութիւնների մէջ ապրուած սուրբ կեանքը – անաղմուկ, առանց համբաւաշատ լինելու թնդիւնի, պարզ, իրական մի կեանք – մի՞թէ այսօր ամենայնուհանդիպումն էր երեւումն ու յայտնութիւնը չէ «Աստուծոյ սքանչելիքներին»³, ողորմութեան հիասքանչ փաստերի, որոնք Աստուած միշտ տուել է մեզ եւ որոնք միշտ շարունակում է տալ մեզ, փրկելու համար աշխարհը:

Այժմ ձեզ խնդրում եմ, Սաղմոսերգուի խօսքերով, միանալ իմ աղօթքին եւ իմ փառաբանութեանը. «Մեծ արարէք զՏէր ինեւ, եւ բարձր արասցուք զԱնուն Նորա 'ի Տիասին»⁴. Իմ հետ մեծարէք Տիրոջը եւ բոլորս միասին պանծացնենք Նրա Անունը: Ա՛յլ խօսքերով, գաւակներս, ապրենք հաւատքով:

Սպառազինուէնք հաւատքի վահանով, փրկութեան սաղաւարտով եւ Հոգու սուսերով, որն Աստուծոյ Խօսքն է: Սրան է մեզ յորդորում Պօղոս Առաքեալը Եփեսացիներին ուղղուած Նամակում⁵, որի ծիսական ընթերցումն էինք կատարում քիչ առաջ:

Հաւատք: Մի առաքինութիւն, որի կարիքը շա՛տ ունենք մենք՝ քրիստոնեաներս, եւ ամբողջովին իւրայատուկ կերպով այս «Հաւատքի տարուայ» ընթացքում, որն հռչակել է մեր սիրեցեալ Սրբազան Հայրը, Պօղոս Զ. Քահանայապետը: Քանի որ առանց հաւատքի անհանում է ինքնին հիմքը, որի վրայ կերտուում է ամէնօրեայ կեանքի սրբացումը:

Կենդանի հաւատք այս պահին, որովհետեւ մերձենում ենք «հաւաքի խորհուրդին»⁶, Ամենասուրբ Հաղորդութեանը. որովհետեւ քիչ անց մասնակցելու ենք Տիրոջ այս Զատիկին, որն ամփոփում, բովանդակում եւ իրագործում է Աստուծոյ ողորմութիւնը մարդկանց նկատմամբ:

Հաւատք, գաւակներս, դաւանելու համար, որ սակաւաթիւ ընկերներ անց, այս խորանի վրայ, նորոգ կատարուելու է «մեր փրկութեան գործը»⁷: Հաւատք, ճաշակելու համար Յաւաքածքը եւ այս խորանի շուրջն ու այս Հաւաքի ներսում զգալու համար

¹ 1Կր 6, 20

² Հմմտ. Մտթ 19, 2

³ Սիբ 18, 5

⁴ Սղմ 33, 4

⁵ Հմմտ. Եփս 6, 1-24

⁶ 1Տմ 3, 9

⁷ Հոգեգալստից յետոյ Թ. Կիրակի օրուայ Սբ. Պատարագի ընծաների մատուցման Աղօթքից:

Քրիստոսի ներկայութիւնը, որը մեզ դարձնում է «սիրտ եւ անձն ծի»¹, մէկ սիրտ եւ մէկ հոգի. եւ մեզ դարձնում է ընտանիք, Եկեղեցի, մէկ, սուրբ, կաթողիկէ, առաքելական եւ հռոմէական, որը մեզ համար նշանակում է ընդհանրական:

Հաւատք, ի վերջոյ, դուստրեր եւ որդիներ իմ սիրելի, աշխարհին ցոյց տալու համար, որ սրանք սոսկ արարողութիւններ եւ խօսքեր չեն, այլ աստուածային իրականութիւն, մարդկանց ընծայելով վկայութիւնն ամէնօրեայ կեանքի, սրբագործուած յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու, եւ յանուն Սրբուհի Մարիամի:

¹ Գրծ 4, 32

ՕԳՆԻՐ ԱՅՍ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆԸ

Սիրելի հայրենակից,

նախեւանաջ կամենում ենք յոյս յայտնել, որ այս գրութիւնը գէթ որոշ չափով օգտակար եղաւ քեզ կամ քո մտերիմներին, հոգու լուսաւոր պահեր մտցնելով առօրեայ հոգսաշատ վազքի մէջ:

Մեր միակ նպատակը դա է. «Ծառայել Քրիստոնեայ Հայաստանին»: Դրա համար էլ գրութիւնները բոլորին տրամադրում ենք ամբողջովին անվճար, որպէսզի ամէն ոք հնարաւորութիւնն ունենայ ընթերցելու դրանք եւ դրանցից քաղելու իրեն հարկաւոր հոգեւոր սնունդը:

Մեր նպատակը դրամական շահ վաստակելը չէ: Այդուամենայնիւ, այս ծառայութիւնը կարիքն ունի բոլոր նրանց նիւթական աջակցութեանը, ովքեր ի վիճակի են դա անելու, նոյնիսկ նուազագոյն չափով, իւրաքանչիւր ոք իր կարողութեան սահմաններում: Եթէ կը կամենաս քո նպաստը բերել մեր հետագայ ծրագրերին, ահա սրանք են մեր հաշուեհամարները.

Դրամատուն	ARDSHININVESTBANK, Yerevan, Armenia
SWIFT	ASHBAM22
ՀՀ Դրամով	247230777770
Եւրոյով	247230777770 / 0049
ԱՄՆ Դոլարով	247230777770 / 0001
Հաշուետէր	KAZARIAN VAGE

Ճիշտ է, մեծ մեկենասութիւնները կարելոր են, բայց փոքրիկ նուիրատուութիւններն անգամ արժէքաւոր են գործը յառաջ տանելու համար: Նման են կաթիլներին, որոնք կուտակուելով՝ կարող են լցնել գաւաթը: Եւ կարող են ծնունդ տալ մեծ գրքերի, որոնք եղել են եւ մնում են մարդկային էակի հոգեւոր սնունդը:

Մեր գործունէութեանը, արդէն իրականացուած կամ ապագայի համար ծրագրուած ձեռնարկներին վերաբերուող որեւէ տեղեկութիւն ստանալու համար կարող ես գրել մեզ, գործածելով այս գրութեան երկրորդ էջում նշուած նամակատարի հասցէն: Սիրով կը պատասխանենք:

Մաղթում եմ ամենայն բարիք ի Տէր:

ՕՅԻՐ ԳՐԻՆՆԵՐԻ ՕՅԻՐՈՒՄՆԵՐԻ

